

ԿԱՐԾԻՔ

Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «**Պաշտպանի մասնակցությունն ապացուցմանն առաջին ատյանի դատարանում**» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին/ Մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – **Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

Թեմայի արդիականությունը:

Հեղինակին հաջողվել է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին համապատասխան հիմնավորել թեմայի արդիականությունը՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով: Նախևառաջ հարկ ենք համարում ընդգծել, որ 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը գաղափարախոսական փոփոխություններ մտցրեց թեկնածուական ատենախոսության առանցքը կազմող այնպիսի կառուցակարգերում, ինչպիսիք են մեղադրյալի պաշտպանության իրավունքը, կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը: Սրանից զատ, սակայն, առաջին ատյանի դատարանում դատաքննության փուլն ինքնին ենթարկվեց մի շարք հիմնարար փոփոխությունների, որոնք նախանշեցին հայրենական քրեադատավարական կարգավորումների զարգացման վեկտորը: Նշված փոփոխություններով պայմանավորված՝ գործնականում առաջացել և առաջանում են բազմաթիվ խնդիրներ, իրավիճակներ, որոնք տեսական լուրջ և համակարգված ուսումնասիրության կարիք ունեն, որոնց

արդյունքում կներկայացվեն տեսագործական կարևորություն ունեցող առաջարկություններ:

Կիրառելով իր պրակտիկ փորձը և համադրելով այն ուսումնասիրված մասնագիտական գրականության աղբյուրների հետ՝ հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը, ինչը կասկած չի հարուցում: Վերարժևորված և վերափոխված դատաքննության փուլի բաժանումը երեք որոշակիորեն ինքնուրույն ենթափուլերի առաջ է բերել օբյեկտիվ անհրաժեշտություն դրանց հետազոտման, այդ թվում՝ պաշտպանի մասնակցության և պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման դիտանկյունից: Ավելին՝ հեղինակն առանձին պարագրաֆներով քննարկել է ենթափուլերից յուրաքանչյուրը՝ անդրադառնալով ոչ միայն օրենսդրական կարգավորումներին, այլև վերլուծելով դրա փիլիսոփայությունը, նմանությունը և հարաբերակցությունը այլ պետությունների պրակտիկայի հետ: Թեմայի արդիականության հիմնավորման փաստարկներից է նաև այն, որ ատենախոսը ոչ միայն քննարկել կամ մատնանշել է, իր կարծիքով, օրենսդրական բացեր կամ դրական նորամուծություն հանդիսացող կարգավորումներն ինքնին, այլև մանրակրկիտ դիտարկել է պաշտպանի մասնակցությունը դատաքննությանը և այդ կարգավորումները քննարկել է դինամիկ՝ գործնական կիրառման տեսանկյունից: Ի վերջո, թեմայի արդիականության մասին է վկայում նաև պաշտպանի դատավարական կարգավիճակի վերարժևորված քննարկումը՝ նոր կարգավորումների ներքո և այն առաջարկները, որոնք ուղղված են պաշտպանի դատավարական կարգավիճակին և վարքագծին, կիրառելի էթիկական չափանիշներին:

Վերը նշվածը վկայում է, որ Լուսինե Հովհաննիսյանի կողմից ընտրված թեման՝ «Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ, գիտական հետազոտության համար արդիական և օբյեկտիվորեն անհրաժեշտ է:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանին անդրադառնալիս հարկ է նկատել, որ թեպետ, օրինակ, պաշտպանության իրավունքը կամ դատաքննության փուլը հայրենական քրեադատավարական տեսությանը ավանդաբար հայտնի են, դրանց վերաբերյալ առկա են հետազոտություններ, սակայն, պայմանավորված օրենսդրական նոր իրողությամբ, Լուսինե Հովհաննիսյանի աշխատանքը հայրենական քրեական դատավարական իրավունքում դեռևս միակ համալիր գիտական աշխատանքն է, որը ներկայացվել է պաշտպանության: Ավելին՝ քննարկված հարցերի մի մասը (օրինակ՝ լրացուցիչ դատալսումների դատավարական նշանակությունը և պաշտպանի մասնակցությունը դրան) և հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկները նորույթ են և ունեն տեսական կարևոր նշանակություն:

Հեղինակի հետևությունները, եզրակացությունները և առաջարկները հիմնված են ոչ միայն տեսական գրականության, այլև վերջինիս պրակտիկ աշխատանքի արդյունքների, ներպետական և միջազգային պրակտիկայի և դրանց դոկտրինալ մեկնաբանությունների վրա: Հեղինակի կողմից բարձրացված հարցերը ունեն հրատապություն և կարիք տեսագործական լուծումների առաջարկման:

Մեթոդոլոգիական տեսանկյունից հեղինակը ճիշտ է ձևակերպել հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության նպատակը ևս հստակ սահմանված է, որի իրականացումը պայմանավորված է ճշգրտորեն առանձնացված խնդիրներով և դրանցից յուրաքանչյուրին պատշաճ խորությամբ կատարված անդրադարձով: Կարծում ենք՝ հետազոտության դրված խնդիրներն ամբողջությամբ հաղթահարված են:

Հետազոտության տեսական հիմքն են կազմում թեմային վերաբերող հայրենական և միջազգային գիտական աշխատանքները: Հեղինակի կողմից ուսումնասիրվել է նաև ծավալուն արևմտյան գրականության աղբյուրներ, ինչպես

նաև՝ վերաբերելի դատական որոշումների և նորմատիվ իրավական ակտերի լայն շրջանակով:

Կարծում ենք՝ հայրենական դատավարական գրականության մեջ Լուսինե Հովհաննիսյանի կողմից բարձրացված հարցադրումները և խնդիրներն առաջին անգամ են նման խորությամբ հետազոտվում մեկ ընդգրկուն աշխատանքի շրջանակում:

Աշխատանքի գիտական նորույթը արտահայտվում է պաշտպանի դերի, նշանակության, պաշտպանության իրավունքի գործնական իրացման և դրա արդյունավետության խնդիրների համակարգային հետազոտությամբ՝ առաջին ատյանի դատարանում՝ դատաքննության փուլում: Այս մեկնաբանությունն իրականացվել է հիմքում ունենալով և՛ վերաբերելի տեսական գրականություն, և՛ դատական պրակտիկան, ինչպես նաև նորմատիվ, այդ թվում՝ միջազգային կարգավորումները: Հեղինակի կողմից ուրվագծվել է պաշտպանի՝ առաջին ատյանի դատարանում ապացուցմանն արդյունավետ մասնակցության հորիզոնը, ընդհանուր գծերը, ինչպես նաև ներկայացվել են կոնկրետ խնդիրների լուծման ուղղված առաջարկներ: Հարկ ենք համարում նշել, որ պաշտպանության ներկայացված բոլոր դրույթները պարունակում են գիտական նորույթ և ընդունելի են:

Հետազոտության արդյունքները փորձարվել են գիտագործնական և տեսական գիտաժողովներում՝ զեկույցների ներկայացման միջոցով, ամսագրերում և ժողովածուներում հրատարակված հոդվածներում, ինչպես նաև գործնական աշխատանքում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեմային, դրա նպատակներին և խնդիրներին: Ատենախոսության առանձին բաղադրիչները

փոխկապակցված են միմյանց հետ, բնականորեն շարունակում և փոխլրացնում են միմյանց:

Աշխատանքի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն կատարված է պատշաճ մակարդակով, ներկայացվող առաջարկությունները գիտականորեն ընդունելի են: Համակարծիք ենք նաև առաջարկների օրենսդրական ամրագրման հետևության հետ:

Աշխատանքում հեղինակը ծավալուն անդրադարձ է կատարում պաշտպանության իրավունքին, պաշտպանին՝ որպես քրեադատավարական սուբյեկտի՝ քննարկելով սուբյեկտայնությունը ոչ միայն որակավորման ֆորմալ առկայության, այլև դրա գործնական դրսևորումների տեսանկյունից՝ համադրելով և հակադրելով պաշտպանին և վստահորդին, փորձելով բացահայտել՝ ինչ ծավալ ունի «պաշտպանվել» եզրույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համատեքստում: Այս շրջանակում հետաքրքրական են նաև ԱՄՆ դատական պրակտիկայից բերված օրինակները, երբ, չնայած պաշտպանի ֆորմալ առկայությանը, մեղադրյալները պնդում էին, որ, ըստ էության, պաշտպանվելու հնարավորությունից զրկված են եղել: Մատնանշված վերլուծությունների արդյունքում հեղինակը հետաքրքրական կերպով փոխկապակցում է պաշտպանության բովանդակությունը պաշտպանների նկատմամբ պարտադիր կիրառելիություն ունեցող օրենսդրական և բարոյաէթիկական նորմերի հետ՝ հիմնավորելով, որ այս հարցերի քննարկումն էական է, նախքան դատավարական որևէ փուլում պաշտպանի մասնակցության առարկայական հետազոտությունը:

Հատկանշական են հեղինակի վերլուծությունները պաշտպանության կողմի՝ պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքի առնչությամբ: Հեղինակն իրավացի դատողությունները է անում, որ պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը կարող է լինել արդյունավետ այն դեպքում, երբ պաշտպանության կողմն ամբողջական պատկերացում ունի մեղադրանքի մասին: Կարևորում ենք նաև

հեղինակի մատնանշումն առ այն, որ մեղադրանքի պարզաբանման անհրաժեշտություն բոլոր գործերի շրջանակում չէ, որ առկա է: Չնայած դրան՝ պայմանավորված և՛ քրեաիրավական, և՛ քրեադատավարական հարաբերությունների դինամիկ զարգացմամբ քսանմեկերորդ դարում, ինչպես նաև դատական պրակտիկայում ոչ հայտնի կամ քիչ հայտնի որակումներով, երբեմն, իսկապես, առկա է մեղադրանքը պարզաբանելու անհրաժեշտություն: Այս կապակցությամբ, հեղինակը հիմնավորում է, որ մեղադրանքի պարզաբանումը չպետք է հավասարեցվի դրա մեխանիկական վերլնթերցման, այլ պետք է ենթադրի որոշակի բացատրական աշխատանք, որը թույլ կտա հասկանալ՝ կոնկրետ ինչ մեղադրանքից է անհրաժեշտ պաշտպանվել: Հեղինակը, կանխատեսելով հնարավոր հարցադրումը, անդրադարձել է նաև մեղադրանքի հնարավոր փոփոխությանը՝ դատաքննության փուլում՝ այն դիտարկելով որպես բացառություն կանոնից, ինչին միանգամայն համաձայն ենք: Ի վերջո՝ կատարվել է ծավալուն վերլուծություն՝ հիմնավորելով, որ պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման դիտանկյունից մեղադրանքի պարզաբանումը, միջնորդության առկայության դեպքում, պետք է տեղի ունենա նախնական դատալսումների փուլում:

Ուշագրավ է հեղինակի առաջարկությունը՝ կապված նախնական դատալսումների փուլում ներկայացվող միջնորդությունների քննության և լուծման հետ դատավարական հենց այդ փուլում: Նշված առաջարկը հեղինակը հիմնավորում է դատաքննության ենթափուլային տրամաբանության փոփոխությամբ՝ փաստարկելով, որ դատաքննության հաջորդող փուլերում այս միջնորդություններին անդրադարձը որոշակիորեն ժամանակավրեպ է:

Փաստարկված ենք համարում նաև հեղինակի վերլուծությունները լրացուցիչ դատալսումների կառուցակարգի դերի, նշանակության, կարևորության և դրական նորույթ հանդիսանալու առնչությամբ: Որպես ելակետ՝ հեղինակն ընդունում է այս նորամուծության դրական բնույթը՝ համեմատական վերլուծություն իրականացնելով

անգլոսաքսոնական իրավական ընտանիքի պետությունների պրակտիկայի հետ՝ նաև նշելով, սակայն, որ արդի քրեադատավարական համակարգերը (մայրցամաքային-անգլոսաքսոնական) միմյանց հետ փոխգործակցում են ավելի սերտորեն, և հնարավոր է նկատել ավանդաբար մեկ իրավական ընտանիքին բնորոշ դրսևորումներ մյուսում: Այլ վերլուծության խորացման արդյունքում հեղինակը հանգում է օրենսդրի կողմից ներդրված դատավարական պատնեշի (մեղքի/մեղավորության և պատժի/պատասխանատվության հարցերի միջև) ամրապնդմանը՝ հիմնավորելով, որ այն հաջորդ բնական քայլն է օրենսդրի կամքի առավել ընդգրկուն կենսագործման:

Աշխատանքում կարելի է հանդիպել այլ ուշագրավ առաջարկների ևս, որոնք իրենց ուրույն նշանակությունն ունեն պաշտպանի՝ առաջին ատյանի դատարանում ապացուցմանը մասնակցության համատեքստում:

Թեպետ պաշտպանության ներկայացված հիմնահարցերի վերաբերյալ մենք համաձայն ենք հեղինակի դիրքորոշման հետ՝ գնահատելով դրա գիտագործնական նշանակությունը, պատշաճ գիտական և տեսական մակարդակը, ինչպես նաև վերլուծությունների խորությունը, այնուամենայնիվ աշխատանքում առկա են նաև վիճահարույց դրույթներ:

Այսպես.

1. Ատենախոսության առաջին գլուխը նպատակադիր անդրադառնում է պաշտպան-վստահորդ հարաբերություններին՝ դիտարկելով դրանք որպես պաշտպանության գործառույթը հասկանալու կարևոր հիմք: Միևնույն ժամանակ, օգտակար կլիներ ավելի հստակեցնել այդ հարաբերության գործնական և դոկտրինալ հետևանքները՝ առաջին ատյանի դատարանում ապացուցմանը պաշտպանի մասնակցության համատեքստում: Մասնավորապես, կարծում ենք, անհրաժեշտ է առավել մանրակրկիտ ներկայացնել այն դեպքերը, որոնց շրջանակում հեղինակի համար ընդունելի է

պաշտպանի և վստահորդի դիրքորոշումների տարբերությունը: Հեղինակը պարզաբանում է, որ զուտ իրավական բնույթ կրող հարցերում հնարավոր է դիրքորոշումների տարբերություն և պաշտպանը կարող է ներկայացնել իր տարբերվող դիրքորոշումը, եթե ողջամտորեն վստահ է, որ այն չի կարող վնասել վստահորդի շահերին: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ պարզաբանումներ վստահորդի կամքի և պաշտպանի մասնագիտական ինքնավարության սահմանների առնչությամբ՝ ապացուցողական տակտիկայի շրջանակում, տարածայնությունների կամ վստահության խաթարման հետևանքները պաշտպանության կազմակերպման համար: Նման հստակեցումները կուժեղացնեն առաջին գլխի և հետագա՝ առավել ընթացակարգային առաջարկների միջև ներքին տրամաբանական կապն ու համահունչությունը:

2. Թեպետ հեղինակը մանրակրկիտ հետազոտման է ենթարկում դատաքննության փուլերը՝ կարևորելով դրանց վերափոխված տրամաբանությունը և դատավարական տարբերությունները, կարծում ենք, որ երբեմն տպավորություն է ստեղծվում, որ դրանք դիտարկվում են միմյանցից խիստ անջատ և տարրալուծվում է դրանց ընդհանրության գաղափարը: Մասնավորապես՝ թեև նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումները որոշակի ինքնավարություն և նշանակություն ունեցող ենթափուլեր են, սակայն դրանք գտնվում են օրգանական կապի մեջ՝ հանդիսանալով դատավարական մեկ փուլի բաղկացուցիչները:
3. Հեղինակն ատենախոսության երրորդ գլխում քննարկում է նախնական դատալսումների փուլում պաշտպանության կողմի ապացույցներ ներկայացնելու իրավունքի կարևորությունը՝ պնդելով, որ այս հարցը, պայմանավորված իր նշանակությամբ, չպետք է դիտարկել որպես «այլ վերաբերելի հարցերի» մաս, այլ դրա համար անհրաժեշտ է նախատեսել

օրենսդրական ուղղակիորեն սահմանված հնարավորություն: Փաստարկների թվում է այն, որ ապացույցների վերաբերյալ մյուս հարցերն ուղղակիորեն կարգավորված են, հնարավոր է, որ պաշտպանը միայն դատաքննության փուլից ներառված լինի պաշտպանական թիմում և այլն: Չնայած իրավական որոշակիության տեսանկյունից առաջարկն ընդունելի է, սակայն դրա իրագործումը խիստ հրատապ չէ: Այսպես, նախ՝ ապացույցի ներկայացման հարցը, իրավամբ, կարող է քննարկվել «այլ վերաբերելի հարցերի» շրջանակում, բացի այդ, պաշտպանության կողմը զրկված չէ մինչդեռատական վարույթի ընթացքում, գործնականում՝ դրա ցանկացած փուլում, վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել ապացույցներ: Ավելին՝ ապացույցի ներկայացման հնարավորություն նախատեսվում է նաև հիմնական դատալսումների փուլում, իսկ գործնականում, նախնական և հիմնական դատալսումները կարող են տեղի ունենալ անգամ նույն օրացուցային օրվա ընթացքում:

4. Ինչպես նշվել ենք, ատենախոսության առավելությունների ցանկում է հեղինակի պրակտիկ փորձը, որը թույլ է տվել վերջինիս առավել մանրակրկիտ ծանոթ լինել քրեադատավարական նոր օրենսդրության գործնական կիրառման որոշ խնդիրների: Միևնույն ժամանակ, սակայն, աշխատանքում նկատելի է, որ հեղինակն առավել խոր ուշադրություն է դարձրել դատաքննության նոր ենթափուլերին՝ նախնական և լրացուցիչ դատալսումներին՝ չնայած նրան, որ հիմնական դատալսումների փուլում ևս տեղի են ունեցել կառուցակարգային փոփոխություններ: Մինչդեռ, հայրենական քրեադատավարական կարգավորումներին ավանդաբար հայտնի ենթափուլերը ևս էականորեն փոփոխվել են: Ցանկալի կլիներ, որ առավել մանրամասն քննության առարկա դարձվեին հիմնական դատալսումների փուլում պաշտպանության կողմին տրվող այնպիսի

հնարավորություններ, ինչպիսիք են բացման խոսքը, օրենքի կիրառման և մեկնաբանման հարցի քննարկումը, հիմնական դատալսումները վերսկսելու դեպքում պաշտպանության կողմի իրավունքները և պարտականությունները՝ հատկապես պաշտպանական տակտիկայի դիտանկյունից:

5. Եվ վերջապես աշխատանքն առավել կշահետ, եթե հեղինակն առանձին հիմնահարցերի անդրադառնալիս՝ դրանց համատեքստում քննարկման առարկա դարձնել պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման, մրցակցության սկզբունքի դրսևորման և վերջին հաշվով քրեական արդարադատության համակարգում պաշտպանի դերակատարության բարձրացման համար առանցքային նշանակություն ունեցող քրեադատավարական ինկորպորացված նորագույն ինստիտուտներից մեկի՝ փորձագետի կարծիքի կիրառական ասպեկտներին պաշտպանական մարտավարության տեսանկյունից:


Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն նսեմացնում կատարված աշխատանքի դրական գնահատականը:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում ենք, որ Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի «Պաշտպանի մասնակցությունն ապացուցմանն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.04 – «Դատական իրավունք» – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները (այդ թվում՝ համահեղինակությամբ) վերաբերում են դրա հիմնական դրույթներին և արտացոլում դրանք:

Պաշտոնական ընդդիմախոս՝

**ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Գ. Ենգիբարյան**



ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գ. Ենգիբարյանի
ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

Դեկանի տեղակալ

Աշոտ Պետրոսյան

12.02.2026 թ.

